№ 136 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 **1892** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26 № 136

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԱՌԱՋԻԿԱՑ 1893 ԹԻԱԿԱՆԻՆ

21-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 21-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բայազետյան և Բաղաբերդյան փողոցների անկիւնում, Թամամշեվի տունը). Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK». Ցայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով. բառին վճարվում է 2 կոպէկ. «Մշակի» առաջին երեսի վրա մանաւոր ցայտարարութիւններ չեն ապագրվում, այլ ապագրվում են միմիայն՝ լրագրների ցայտարարութիւնները, մահացուցակները և պաշտօնական հաստատութիւնների ցայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի ապագրելը առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորրորդ երեսի վրա՝ 2 ռուբլի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խորէն Նարբէյի թաղումը. Նամակ Ամերիկայից. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իմ պատասխանի վերջաբանը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Հայոց դերասանները նոյեմբերի 23-ին Շէքսպիրի հոգին հանեցին, այնքան աղաւաղեցին նրա «Շէյլօկը»: Մեղաւորը Թատրոնի ղեկավարներն են, որ «Շուխիկ» պիէսայից երեք օր յետոյ «Շէյլօկ» պիէսան դրեցին, թէ դերասանները,—այդ մեզ համար մի և նոյն է: Մենք միայն այն գիտենք, որ նոյեմբերի 23-ին մեր տեսածը Շէքսպիրի «Շէյլօկը» չէր, այլ կլասիական պիէսայի ողորմելի ուրուականը....

Նախ բենեֆիցիանտ պ. Աբրահամեանի մասին, որը կատարում էր Շէյլօկի դերը: Պ. Աբրահամեան քարեխիղճ դերասան էր մինչև այժմ. նա տոկուն կերպով ուսումնասիրում էր իր համառօտ, որոշ տեսակի դերերը, և յաճախ մեծ չնորքով էր կատարում նրանց, արժանանալով հասարակութեան համակրութեան: Բայց ահա փչեց մի անիծեալ քամի, և տոկուն դերասանը կամեցաւ միանգամից ապշեցնել ժողովրդին, կատարելով Շէյլօկի դերը, այն էլ մի այնպիսի քաղաքում, ուր տեսել են այդ դերում Բոսսիին:

Բայց ինչ Շէյլօկ. Շէքսպիրի Շէյլօկի հոտն անգամ չը կար: Պ. Աբրահամեան մինչև իսկ չէ հասկացել, թէ ինչ տիպ է այն հրէայի տիպը, որը դարերից ի վեր չէ կորցնում իր կենդանութիւնն ու ճշդութիւնը: Թէ երկրորդ և թէ երրորդ գործողութեան մէջ դերասանը ոչ թէ ներկայացնում էր դէպի քրիստոնեաները խորին ատելութեամբ լցված, վրէժխնդրութեան տենդով բռնված, և մի և նոյն ժամանակ վախկոտ, ծածկամիտ, թշնամու դժբաղդութեան վրա խնդացող և կորած ոսկիների համար ողբացող ու սարկաղմով լցված հրէայ-Շէյլօկին, այլ մի ծերունի հերոսի (յայտնի չէ ինչ ազգից), որն ամբողջ ժամանակ շանթեր է արձակում, գոռում, հայհոյում է, կարծէք երկրի իշխան լինի: Իսկ վերջին գործողութեան մէջ՝ դատաստանի սարսափելի ճրագնաժամին, պ. Աբրահամեանի ոչ ձայնը, ոչ դէմքի շարժուածքները և ոչ խաղի ամբողջ ընթացքը չը պատկերացրին սկզբում անողոք, խստապահանջ, և վերջումը խորտակված Շէյլօկի սոսկալի յուզմունքի սուրէն անդամ: Մի բոպէ, բայց մի բոպէ նա կարողացաւ տիրապետել իր խաղին,—այդ այն բոպէն էր, երբ Պօրցիան ասում է. «Եթէ կը թափես մի կաթիլ արիւն....», և այդ բոպէին պ. Աբրահամեան կարողացաւ իր լուռ դէմքի վրա արտայայտել Շէյլօկի ամբողջ հոգեկան փոթորիկը, և կրկին ընկաւ առաջվայ անդոյնութեան մէջ....

Շէյլօկի դերը հասարակ դերասանների համար չէ ստեղծված, և ոչ մի բարեխիղճ, իր դերը և ոյժը հասկացող դերասան չը պէտք է թոյլ տայ իրան՝ այնպիսի դերեր վերցնել, որոնց մեծութեան առջև ինքը նսեմանում, կորչում է: Բաւական չէ միայն ցանկանալ՝ կլասիական դերեր կատարել. դրա համար և ոյժ և չնորք է հարկաւոր: Այդպէս խօսք չի լինի: Վաղն էլ մի ուրիշ դերասան կուգենայ «Համլէտ» խաղալ, մի երրորդը՝ «Լիր թագաւոր», այդ ուր կերթայ: Ամեն մի դերասան պարտաւոր է բարձր պահել գեղարուեստի, բեմի պատիւը, և ոչ թէ նրան ծաղրի առարկայ դարձնել:

Դառնանք միւս խաղացողներին: Պ. Արէշեան—Բասանիոյի գեղեցիկ դերում, պ. Պետրոսեան—Անտոնիոյի փոքրիկ դերում և պ. Վյոլը—Մարոկկոյի իշխանի դերում, վատ չէին: Պ. Աբէշեան աւելի լաւ կը խաղար, եթէ լաւ սերտած լինէր իր դերը: Տիկին Մելիքեան թոյլ կատարեց Պորցիայի դերը, իսկ Պորցիա-փաստաբանի դերը բոլորովին փչացրեց:

Միւս խաղացողները դժգոյն էին ընդհանրապէս: Այդ երեկոյ Արագոնիայի իշխանի փոքրիկ, բայց գոհունակ դերում դուրս եկաւ մի նոր սիրող, որն ուզում է իրան նուիրել բեմին, Զարչիոզլեան ազգանունով: Պարոնն ունի բեմական արտաքին տեսք: Թէ ինչ ապագայ է խոստանում նա,—դժուար է միանգամից գուշակել: Տեսնենք ինչ կը լինի ուրիշ անդամ: Այդ երեկոյ մի բան միայն պարզ էր.—նա շատ խամ է դեռ:

Էլի երկու խօսք: «Շէյլօկի» տապալմանը նրպատճառ մեր դերասանների անիծեալ յատկութիւնը՝—դերերի չիմանալը: Միթէ կարելի է Շէքսպիրի պիէսան այդպէս անփոյթ կերպով պատրաստել: Երեկայեցէք: Շէքսպիրն ասում է.

«Վենետիկի օրէնքը պատուիրում է,
Թէ դատաստանով հաստատվի, որ մի
Օտար երկրացի ուղղակի կերպով
Կամ անուղղակի ուզել է սպանել
Մի քաղաքացուն....

Իսկ դերասանուհի Մելիքեան աղաւաղելով ասում է.

«Օրէնքը պատուիրում է, եթէ Վենետիկում հաստատված օտար երկրացի մէկը ուզենայ սպանել մի հայ քրիստոնեայ...» (ընդհանուր ծիծաղ) ինչ էր, ինչ հայ...: Անփոյթ դերասանուհին մեզ յիշեցնում է մեր պառաւ տատերին, որոնք կարծում են թէ աշխարհումս միայն հայն է, որ քրիստոնեայ է... իսկ պ. Պետրոսեան արտասանեց՝ այսպիսի մի նախադասութիւն. «Եթէ Շէյլօկ մահից յետոյ տորադրութիւն կը տայ»:

Մի խօսքով իւրաքանչիւր քայլափոխում նոյն երևոյթը՝ դերերը չը գիտեն: Վերջ պէտք է տալ դրան, թէ ոչ: Մենք դէմ ենք մարդկանց պատժելուն, բայց, ինչպէս տեսնում ենք, մեր դերասաններից չատերին ուղղելու ուրիշ միջոց չը կայ, բայց եթէ պ ա տ ի ժ, այն էլ դրամական պատիժ: Ոչ մի խրատ, ոչ մի նկատողութիւն չազդեց: Այժմ մնում է որ Թատրոնի ղեկավարները իւրաքանչիւր սխալի համար՝ տուգանք վերցնեն խաղացողներից: Ուրիշ հնար չը կայ:

Վերջապէս դա կը լինի մի լաւ աղբիւր մեր Թատրոնի դատարկ կասսայի համար: Դերասանները այնքան սխալներ կանեն, որ եթէ ամեն մի սխալին մի կոպէկ վերցնէք, այնու ամենայնիւ իւրաքանչիւր դերասան հազիւ իր ռոճկից՝ ամսի գլխին մի երկու ռուբլի կը ստանայ:

Այն ժամանակ կասսան, ինչ խօսք, միշտ լի կը լինի: Ո՛հ, և այն ժամանակ քանի քանի մարդիկ կը կամենան Թատրոնի կոմիտեի անդամ լինել...

*

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 17-ին

Մօտ օրերս առիթ է ներկայանում մի փոփոխութիւն մտցնել այստեղի քաղաքային ինքնավարութեան մէջ, որը ապագայում դուցէ չատ մեծ դեր կարողանայ խաղալ ընտրութիւնների ժամանակ. այդ՝ քաղաքային վարչութեան միակ տոկուն անդամ պ. Վ. Տէր-Յովհաննիսեանի հրաժարականն է, որ ներկայացրել է քաղաքային վարչութիւնը և ահա 15 օր է այլ ևս չէ վարում իր պաշտօնը: Մենք չենք մտնում այն պատճառների մէջ, որոնք եղան միակ չարժառիթը պարոնի իր պաշտօնից հեռանալուն, այդ բանը երևանցիներիս, մանաւանդ մեր ձայնատուներին քաջ յայտնի է, այլ այստեղ մենք խօսելու ենք նրա յաջորդի մասին:

Այսօր օրվայ հարցն այն է, թէ ո՞վ պէտք է վարի վարչութեան անդամի պաշտօնը: Թէև չատ քաղաքներում վարչութիւնն ունի երկու անդամ, ինչպէս օր. Բաքուն իր 100 հազարի մօտ բնակիչներով, բայց մեր կախարդված Երևանը երկու թիւը մարսել չէ կարողանում և անպատճառ երրորդ անդամը կարևոր է համարում, որը լրացվում է մեր հարևան Թուրք ժողովրդից: Այդպէս էլ եղել է մինչև օրս, իսկ այսօր երբ պ. Տէր-Յովհաննիսեան թողել է իր պաշտօնը, զանազան հաշիւներով առաջնորդված մարդիկ զանազան տեսակ պրօէկտներ են առաջարկում. մէկը առաջարկում է բաւականանալ մնացած երկու անդամով, մի ուրիշը առաջարկում է փոխանդամի ռոճիկը իջեցնել մինչև 400 ռուբլի (անդամը ստանում է 1200 ռ.): Եւ ի հարկէ, նայելով թէ այդ մարդկանցից ով աւելի ճարպիկ է, նա հաւանութիւն ունի յաղթանակը տանել, առանց քաղաքի շահն աչքի առաջ ունենալու:

Այժմս փոխանդամ պ. Աբաս-Ղուլի խանը հրաժարվում է անդամի պաշտօնը վարելուց, և այդ պաշտօնը վարում է երկրորդ փոխանդամ պ. Ի. Տէր-Դրիգորեան, որը նոյնպէս մտադիր է թողնել այդ պաշտօնը: Այժմ մնում է կամ բաւականանալ երկու անդամով և կամ նորից մի անդամ ընտրել: Բաւականանալ երկու անդամով առ այժմ անկարելի է նկատվում, որովհետև պարապմունքների այնպիսի բաժանմունքը, ինչպէս այժմս կայ՝ դժուարացնում է երկու անդամով կառավարելու գործը. բայի այս պէտք է յիշած, որ քաղաքագլուխը քանիցս յիշած է դումայի ժողովներում, որ երկու անդամով դժուար է կառավարել գործերը: Միւս կողմից էլ աչքի առաջ ունենալով այն մի քանի կարևոր հարցերը, ինչպէս են Ղրխբուլաղի աղբիւրներից դէպի քաղաքը բերվելի ջուրը, քաղաքային վարելահողերի դանձարանից խլվելու հարցը, քաղաքի կայքերի կրկնատնտեսութիւնը, քաղաքային բանկի բացումը, փողոցների սալայատակելը և այլն և այլն, որոնք անտգին ծախսերի դուռ են բաց անում, մի և նոյն ժամանակ անագին եկամուտների աղբիւր են դառնալու, մեր լաւագոյն ճանաչորներին (որոնք տարաբաղդաբար դումայում փոքրամասնութիւն են կազմում) մտածել են տալիս մի այնպիսի անձն ընտրել երրորդ անդամի տեղ, որը անկաչառ, «դուռ» և տոկուն ընտրութիւնից դուրս ունենայ իր ետեից հասարակութեան համակրութիւնը, որը ժողովրդի շահերը պաշտպանելով հանդերձ, մեր ուղղափայի և դումայի ներկայ խստաշունչ կազմակերպութեան ժամանակ կարողանայ քաղաքային շահերը հեռու պահել զանազան անձնական միտումներից: Այդպիսի անձնաւորութեան անհրաժեշտութիւն նկատվում է այժմ մանաւանդ, երբ հասարակութեան մէջ պտտվող լուրերին համաձայն, քաղաքային մեղուկում կանխիկ փող չը կայ, իսկ նրա փոխարէն զանազան անձանց մուրհակներ են երևում:

Ցաղուածիս սկզբում ասեցի, որ այդ ընտրութիւնը մեծ դեր կարող է խաղալ ապագայ ընտրութիւնների ժամանակ, այդ այն պատճառով, որ այդ անձնաւորութիւնը, նայելով, ի հարկէ, թէ ինչպիսի ուղղութիւն կը բռնի, կարող է պարզորոշ ներկայացնել մեր ներկայ գործիչների իսկական պատկերը և ապագայում մեր ընտրողները կը զգուշանան իրանց սպիտակ քուէները քուէատուփի մէջ գցելիս այս և այն ազգային տասնեակներով սպիտակ գնտակներ տալուց:

Առ այժմ Երևանում ապրող և Երևանին յայտնի անձնաւորութիւններ մենք կարող ենք մատնացոյց անել պ.պ. Վասիլ Եղիազարեանի և Տրդատ Վարդանեանի վրա, որոնցից առաջինը իր սեփական գործերի պատճառով դուցէ չը ցանկանայ ընդունել այդ պաշտօնը, իսկ երկրորդը, որը յայտնի է Երևանի հասարակութեանը նուստարի իր երկարամեայ պաշտօնավարութիւնով, նաև պետական զանազան պաշտօններ է վարած, կարող է հաւատ ներշնչել դէպի մեր հասարակութիւնը, որին էլ մենք, ինչպէս արժանաւորի՝ այդպիսի մի պաշտօնի՝ Երևանի ինքնավարութեան կողմից հրաւիրելիս կարևոր կը համարենք:

Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, նոյեմբերի 22-ին

Անցեալ օգոստոսի վերջերին մենք «Մշակի» մէջ մի լուր էինք հաղորդել տեղիս օրիորդաց գպրոցի օգոստոսի 23-ին կայացած տարեկան ակտի մասին: Այդ լուրին այժմս, երկու ամիս անցնելուց յետոյ, պատասխանում են: Այդ «հերքման» մէջ փաստեր չեն բերված և «հերքումը» պաշտօնական չէ. եթէ մի որ և է հիմնարկութիւն ուզում է հերքել իր մասին դրած մի բան, նա այդ պէտք է անէ պաշտօնապէս. հակառակ դէպքում այդ տեսակ հերքումը նշանակութիւն չունի:

Մենք գպրոցի առաջադիմութեան ակներև կաղալու պատճառը միայն ուսուցիչների 26—28 դաս ունենալը չենք համարել. մենք ասել ենք, որ ուրիշ պատճառներ էլ կան: Այդ ուրիշ պատճառներից մէկն էլ այն է, որ գպրոցի աւագ-վարժուհին հայերէն ամենևին չը գիտէ, ուրեմն նա չէ էլ կարող կարգին վերահսկող լինել, թէ ուսուցիչները ինչպէս են առանցում իրանց դասերը: Ասել թէ երկու ուսուցիչ 26—28 դաս ունեցել են այն պատճառով, որ դրանց յանձնված են եղել այնպիսի առարկաներ, որոնց միմեանցից բաժանելն անհնարին է եղել,—դա միտք չունի: Հետաքրքիր է իմանալ՝ այդ ինչ առարկաներ են, որոնք անխզելի կապերով կապված են միմեանց

հետ... Մենք չենք ասել թէ՝ մեր օրիորդաց դպրոցը գոյութիւն չունի չքաւոր դասակարգի համար: Մենք այսպէս ենք ասել. «մեր օրիորդաց դպրոցը հ ա մ ա ր ե ա թ է գոյութիւն չունի չքաւոր դասակարգի համար:» «Աղնիւ» բանակռուողները դիտմամբ են աղաւաղում ուրիշի ասածը, որպէս զի իրանց ասած ուղիղ դուրս բերէին... Մենք շատ լաւ գիտենք, որ դպրոցում կար ու ձև են սովորեցնում, միայն սովորեցնում են պատի գորգեր և այլ այսպիսի բաներ, որոնց գործել սովորելը կեանքի մէջ ամենևին հարկաւոր չէ: Եւ մինթէ 8—11 տարեկան մանուկներն են գործել, որոնց ձեռքերը չեն զօրում հասարակ գուլպայի ճաղ անգամ բռնել: Աշակերտուհիները պատի գորգեր, կանվայի վրա պատկերներ գործելուց յետոյ՝ էլ երբ ժամանակ կունենան կարդին կար ու ձև սովորելու, քանի որ վերոյիշեալ բաները գործելու համար ահագին ժամանակ է հարկաւոր: Ապա մեզ հաւատացնում են, որ հանդէսի համար յայտարարութիւն է եղել տարածված և որ 200 օրինակ յայտարարութիւն է ցրվել քաղաքում հանդիսի մասին՝ «ի գիտութիւն համայն հասարակութեան»: Այդ տեսակ յայտարարութիւն չէ եղել ամենևին, պնդում ենք մենք: Պնդում ենք նոյնպէս, որ հարուստներին միայն առանձին կերպով հրաւիրել են հանդիսին: Այժմս էլ ասում ենք, որ այդ տեսակ վարմունքը պատիւ չէ բերում դպրոցի վարչութեան:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Աստրախանաբնակ պ. Յովհաննէս Կիտայեանց մի նամակ է գրել «Մշակի» խմբագրութեանը, ջերմ կերպով չնորհաւորելով մեր լրագրի 21-դ տարեդարձը և ինքն գրվելով եկող 1893 թվի համար «Մշակի» մի օրինակին, մի և նոյն ժամանակ ուղարկել է մեզ 90 ռուբլի, որպէս զի մենք մեր հայեցողութեան համեմատ «Մշակի» տարեկան 9 օրինակ ուղարկենք հայոց դպրոցներին և հայ ուսանողներին: Ահա յայտնում ենք թէ ինչ հասցէներով կուղարկենք 1893 թվի ընթացքում «Մշակի» համարները այն փողով, որ նուիրել է պ. Յովհաննէս Կիտայեանց. 1) Ալէքսանդրօպոլի Արղութեան դպրոցին, 2) Սևանի վանքի միաբանութեանը, 3) Քարվանսարայ գիւղի հայոց ուսումնարանին, 4) Շամախու հայոց դպրոցների գրադարանին, 5) Ժընէվ քաղաքի հայ ուսանողութեանը, 6) Ցիւրիխ քաղաքի հայ ուսանողութեանը, 7) Պարիզի հայ ուսանողական գրադարանին, 8) Մոսկվա, տիկին Բելիաեվի գրադարանին, հայ ուսանողների համար և 9) Պետերբուրգ, Անտառային դպրոցի ուսանողներին:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանի գլխաւոր, Աստաֆեան փողոցը, այնպիսի անանկարագրելի ցեխի մէջ է թաղված, որ նոյն իսկ կառքերը դժուարութեամբ են երթևեկում: Ինժենէրական վարչութիւնը վաղուց արդէն պատրաստած ունի խճաքարը՝ այդ փողոցի վրա ածելու համար, բայց քաղաքային վարչութիւնը այնքան անհոգ է եղել, որ մինչև այժմ փողոցի վրա հող չէ ածել, նրա մակերևոյթը բարձրացնելու համար: Իսկ հիմա, երբ արդէն ձմեռ է, երբ կէս արշին խորութեամբ ցեխ է գոյացել փողոցում, հիմա արդէն ուշ է հող ածել փողոցի վրա:»

—

Եկատերինօդարից, պ. Թոփալեանի ձեռքով հանգանակած 11 ռուբլի ստացանք յօգուտ Պատկանեանի ընտանիքի: Նախկին 384 ր. 20 կ. դումարի հետ, ունենք այժմ 395 ռուբլի 20 կոպէկ:

—

«Անոնց» թերթին հեռագրում են Երևանից, որ հանգուցեալ Մակար կաթուղիկոսի գոյքը կողոպտելու գործը, որի քննութիւնը նշանակված էր Երևանեան նահանգական դատարանում, նորից յետաձգվեց՝ վկայ Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանի դատարանը չը ներկայանալու պատճառով: Բերք Տէր-Պետրոսեանին պաշտպանում է երդուեալ հաւատարմատար Խաչատուր Մէլիք-Աղամալեան:

—

ՄՕԶԴՕԿԻՑ ստացանք հետեւեալ նամակը. «Ամսիս 15-ից սկսեցին ցուրտ եղանակները. ձիւնը ծածկել է ամբողջ քաղաքը: Մեզ մօտ առևտուրը շատ ընկած վիճակի մէջ է: Թէև մթերքների մեծ մասը էժան է, բայց վառելափայտը շատ թանգ է: Նոր քաղաքագլխի ընտրութիւնը (նոր քաղաքային կանոնադրութեան համեմատ) յետաձգվեց մինչև յունվար ամիսը: Քաղաքային վարչութիւնը (ուպրաւան) կատարելապէս մնանկ է: Ցանկալի է որ մօղդօկեցիք վերջապէս մի բանիմաց մարդ ընտրեն քաղաքագլխի պաշտօնի համար:»

—

Մեզ գրում են ՄՕԶԴՕԿԻՑ հետեւեալը. «Տեղիս հայ թատրոնասէրները իրաւունք ստացան դերասան Ց. Կարինեանցի հետ՝ ներկայացումներ տալու: Շաբաթ օր, նոյեմբերի 21-ին, սկսվելու է այդ թատրոնական ներկայացումների շարքը:»

—

ԹԻՖԼԻՍԻ Հալաբար թաղի մի քանի բնակիչները խնդրում են մեզ տպագրել հետեւեալը. «Դուք չատ անգամ դանգատվում էք բուն քաղաքի փողոցներում անձրևի ժամանակ գոյացող անանցնելի ցեխի մասին, բայց եթէ այցելէիք մեր Հալաբարը, այն ժամանակ դեռ Աստուծուն փառք կը տայիք Թիֆլիսի փողոցների համար: Հալաբարի փողոցներում ցեխը աներևակայելի և անկարագրելի է. գուցէ տարէն մի անգամ վըստահանում են մաքրել փողոցների ցեխը, բայց այն էլ փողոցների երկու կողմը դարսատում են այդ ցեխը կոյտ կոյտ և ամենևին չեն էլ դուրս տանում, այլ սպասում են, որ անցնող թէ կառքերի և թէ հետեւակների ոտի տակ այդ ցեխը նորից փրվի, տարածվի նոյն փողոցի վրա: Փողոցներում ամեն բան ածում են, ամեն տեսակ ջրեր են թափում, փողոցներումն էլ օրը մի քանի անգամ կառքեր են լուանում և այլն: Մի խօսքով նկարագրել թէ ինչ է կատարվում այստեղ, մանաւանդ անձրևների ժամանակ՝ հնար չը կայ: Մարդ ամաչում է երբ մտածում է թէ Հալաբար կոչված թաղը՝ կովկասեան մայրաքաղաքի թաղերից մէկն է, այն ինչ դա աւելի նման է մի դաւառական յետ ընկած, ողորմելի աւանի թուրք կամ հրէայ կեղտոտ թաղին:»

—

ԴՈՒՇԷԹԻՑ մեզ գրում են. «Դուշէթում կայ մի հայոց եկեղեցի և մի ուսումնարան, որոնք հինգվեց տարի առաջ գտնվում էին բաւական լաւ դրութեան մէջ: Իսկ այսօր եկեղեցու դաւթի պարիսպը, ուսումնարանի չինութիւնը, որը գտնվում է նոյն դաւթում, և եկեղեցու երկու մուտքերը՝ կատարեալ խարխուլ դրութեան մէջ են գտնվում և սպառնում են, մանաւանդ ուսումնարանի չինութիւնը, քանզվելու: Սակայն այդ բոլորի վրա ոչ ոք ուշադրութիւն դարձնող չը կայ:»

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Վերջին ժամանակները քաղաքումս չատացել են գողութիւնների դէպքերը: Անցեալ գիշեր թուրք գողերը, մտնելով մի տուն, տարել են աւելի քան 500 ռուբլու այլ և այլ ապրանքներ: Մեր քաղաքում տարածված է այժմ ըկացաւը մանուկների շրջանում:»

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային Դուման, նոյեմբերի 23-ին իր կայացած նիստում, ձայների մեծամասնութեամբ որոշել է վերացնել քաղաքային բուժարանի դիրեկտորի պաշտօնը: Ինչպէս երևում է այդ պաշտօնի փոխարէն քաղաքը կունենայ քաղաքային սանիտարական բժիշկներ:

—

«Արձագանքը» զարմանում է (իբրև թէ) որ մենք առաջարկելով Թիֆլիսի Ջգրաչէնի դպրոցի համար ընտրել ազնիւ, եռանդոտ, արժանաւոր, ուղիղ հայեացքների տէր հոգաբարձուներ, պատճառաբանել էինք մեր այդ առաջարկութիւնը նրանով, որ այդ դպրոցը հարուստ է, ունի լաւ խանութներ, տներ և լաւ եկամուտ: Ուրեմն «ազնիւ մշակականները» նրա համար են ուզում այնտեղ իրանց մարդկանց ընտրել, որ դպրոցը չատ լաւ եկամուտ ունի, ասում է «Արձագանքը»: Կատարելապէս ճիշդ է, կը պատասխանենք մենք: Մենք չենք ուզում և կաշխատենք չը թողնել, որ դուք ընտրվէք այնտեղ, որտեղ փողկայ: Հասկանում էք: Իսկ այնտեղ, որտեղ փող չը կայ ու լաւ եկամուտներ չեն սպասվում, դուք ինքներդ չէք կամենայ ընտրվել: Անփող տեղերը դուք առանց այն էլ մեզ կը թողնէք. մնում է միայն ձեզ փողաւոր տեղերից քշել: Այդքանը բաւական է:

—

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ ճշմարիտ նկատողութիւնը. «Ռուս «Новое Обозрѣніе» լրագրի վերջին համարներում տպագրվեց հանգուցեալ Խորէն Նար-Բէյի կենսագրութիւնը: Թէ ով է գրել այդ կենսագրական յօդուածը, մեզ յայտնի չէ, բայց անկասկած, գրողը հայ է, որը ռուս լրագրի միջոցով ցանկացել է ծանօթացնել ռուսաց ընթերցողներին մի հայ եպիսկոպոսի կեանքի հետ: Սակայն, տարաբաղդաբար, դա կենսագրութիւն չէ, հիմնված փաստերի վրա, այլ յօդուածագրի անհիմն, քմահաճ եզրակացութիւններ: Երևում է, որ գրողը չատ անտեղեակ է Կ. Պոլսի հայերի կեանքի վերջին 30—40 տարվայ պատմութեան, իր ամբողջ պաշարը վերցրել է լրագրական թղթակցութիւններից և զանազան յօդուածներից, որոնք՝ գրված լինելով զանազան ժամանակ և զանազան տպա-

---

ճառով մի և նոյն անձին տալիս են աստուածային ստորոգելիքներ և մարդկային յատկութիւններ»:—Ինչու՞ մի և նոյն բանը, երբ Շահումեանցի գրքի մէջ ընդունվում և թոյլատրվում է՝ նեստորական և եւտիքական չէ համարվում, իսկ երբ ես եմ ընդունածը և թոյլատրածը կրկնում, համարվում է հերետիկոսական: Ցիշեալ գրքում թոյլ է տուած և ընդունված է ոչ թէ երկու բնութիւն միայն, անբաժան և անշփոթ միաւորութեամբ, որպէս և ես եմ ընդունել՝ ըստ ամենայնի համաձայն դատելով մեր եկեղեցու ուղիղ վարդապետութեան, այլ և ընդունվել է նոյն գրքի 14 երեսում, երկու անձն նոյն և մի Քրիստոսի մէջ՝ որ ես միանգամայն զարմացած եմ, ըստ որում այդ իսկ է նեստորականութիւնը, որի դէմ մեր եկեղեցական սուրբ հարց ժողովն Շիրակավանու, նզովքով բողոքած և ասած է. «Քրիստոս ոչ էառ զմարդկային անձն, այլ՝ զբնութիւն. և ոչ բաժանի յերկուս ըստ Նեստորի». և նոյն ժողովը սահմանեց ասել. «բանն Աստուած եղև մարդ՝ կատարեալ գոլով Աստուածութեամբ, և կատարեալ մարդկութեամբ, յերկուց բնութեանց ի մի անձն միաւորեալ (Սահմ. ժողովոյն Շիրակավանայ. պատ. Հայ. հատ. բ. յեր. 686): Այդ գրքի մէջ ընդունվել և թոյլ է տուած, սրանից չորս տարի առաջ, այն է՝ 1888 ամի 14 յուլիսի, ասել. «Ցիսուս սուրբ կուսի արիւնից առնելով մարդկային բնութիւն, այն է. մարմին, հոգի, միտք, կամք, ներգործութիւն և այլն, կ ա զ մ ե ց ա ւ մարդկային անձն» (նոյն գրքի 14 երես). մի քանի տող ներքևում էլ ընդունվել է «աստուածային անձն». ուրեմն երկու անձն ի մի Քրիստոս. այս ում դաւանութիւնն է. մինթէ մեր ս. եկեղեցու. քաւ լիցի: Կարող էք մեր եկեղեցու պատմութեան մէջ հէնց մի հատ մարդ ցոյց տալ ինձ որ՝ Քրիստոսի մէջ մարդկային անձը դաւանած լինի. որտեղից են այդ վարդապետութիւնը հնարել և թոյլ տուել Շահումեանցի գրքում: Ես կարծում եմ, որ այդ մի սխալ պիտի լինի և ոչ թէ համոզմունք: Բայց սրան ինչ ասենք, որ նոյն գրքում ընդունվել է որպէս ճշմարտութիւն ասել «բնութիւնը (Ցիսուսի մէջ), կամքը, և ներգործութիւնը երկուս (է), այն է՝ աստուածային և մարդկային». բայց չորս տարուց յետոյ ասում են «Արձագանքի» 127 համարում թէ՝ «Առաքելական եկեղեցի Հայաստանեայց ոչ դաւանի երկու բնութիւն...» «Արձագանքի» մէջ «մի անձն, մի դէմ, մի բնութիւն, մի կամք, և մի ներգործութիւն» (կամաց) են ասում. յիշեալ գրքումն էլ ընդունվել և թոյլ է տուած ասելու «երկու անձն, երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն. հիմա ինչպէս համաձայնեցնել այդ երկու տարբեր դաւանութիւնները:—Զարմանալի է և այս որ երբ ես ասում եմ. «Մի բ ն ո ւ թ ի ւ ն ասելով խոստովանում ենք աստուածային և մարդկային բնութեանց անբաժան և անշփոթապէս միացած» «Արձագանքի» մէջ ասված է. «Առաքելական եկեղեցի Հայաստանեայց ոչ դաւանի երկու բնութիւն ըստ Նեստորի և ոչ չփոթեալ և խառն ըստ Եւտիքեայ»:

Քանի որ չեմ ասած թէ «Հայաստանեայց եկեղեցի դաւանի երկու բնութիւն ըստ Նեստորի և մի բնութիւն ըստ Եւտիքիայ չփոթեալ և խառն», ինչ բանի և ում է վերաբերում այդ ակնարկը թէ «Առաքելական եկեղեցի հայոց ոչ դաւանի երկու բնութիւն ըստ Նեստորի և ոչ չփոթեալ և խառն ըստ Եւտիքեայ»: Այս աւելորդ և անտեղի ակնարկին անելուց յետոյ «Արձագանքի» մէջ շարունակում են. «խոստովանի եկեղեցին՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս զՈրդին Աստուծոյ յերկուց բնութեանց միաւորեալ անճառելի և անշփոթ միաւորութեամբ մի բնութիւն» և գոյց են տալիս Ընդհանրականի 14 երեսը, բայց նոյն տեղում այդպիսի բան չը կայ: Զը գիտեմ «զՏէր» և «Զորդի» բառերը ճիշդ են արտագրել, թէ ոչ. թող այդ հայկաբանները դատեն, ես այս կասեմ միայն որ սորից մի տեղում (հէնց նոյն յօդուածի մէջ) հերքածը՝ այստեղ ընդունում են իմ ասածի պէս, այն է՝ «յերկուց բնութեանց միաւորեալ...» Ուրեմն որ «յերկուց բնութեանց» է միաւորեալ. հարկաւ պիտի ասեն ա ս տ ո ւ ա ծ ա յ ի ն և մ ա ր դ կ ա յ ի ն... Բա իմ ասածն ինչ է, չէ՞ որ ես ես ասել եմ մի և նոյնը: Լսեցէք թէ մեր յայտնի աստուածաբան Պետրոս Շանշեան ինչ է ասել. «Քրիստոսի մէջ պէտք է խոստովանել երկու բնութիւն—աստուածային և մարդկային անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ: Առանց այս խոստովանութեան կարող չենք մեկնել և իմանալ աւետարանի զանազան խօսքերը: Օրինակի համար՝ Քրիստոս կասէ. «Հայր իմ մեծ է քան զիս» պէտք է հասկանանք, որ այս խօսքը կասէ իբ մ ա ր դ կ ա յ ի ն բ ն ո ւ թ ե ա ն համար. իսկ երբ կասէ. «Ես ի Հայր և Հայր յիս է»: Այս պէտք է հասկանանք նրա աստուածային բնութեան համար...» (Համառ. Քրիս. Ուսման. երես. 92): Այս գիրքը տպված է Երուսաղէմի Եսայի պատրիարքի հրամանաւ, Առաքելական Աթոռոյ տպարանում, Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի սրբագրութեամբ և Խրիմեան Հայրիկի պատրիարքութեան ժամանակ. յայտնի է, որ հայոց Հայրիկն էլ բարեյիշատակ Պետրոս Շանշեանցի աստուածաբանական հմտութիւնը դրուատած է իրան յատուկ եռանդով:

Վերջապէս, իմ գրքիս իրաքանչիւր վարդապետական և դաւանաբանական սկզբունքը հաստատելու համար կարող էի հարիւրաւոր փաստեր բերել մեր եկեղեցական գրականութիւնից՝ եթէ լրագրական էջերը և պայմանները ներէին ինձ, բայց այսքանն ես բաւական համարելով՝ յոյս ունեմ որ ճշմարտութիւնը լուսնեան չեն տայ: Ցանկալի էր ինձ տեսնել որ այն թերթերը, որոնք յիշեալ կարծիքը հրատարակեցին՝ այնքան ճշմարտասէր լինէին, որ իմ պատասխանն ես արտատպէին, իրանց ընթերցողների մտքերը վերաշինելու և ճշմարտութիւնը վերահաստատելու համար: Այդ կը պահանջէ նրանցից թէ մարդասիրութիւն, թէ ճշմարտասիրութիւն և թէ վերջապէս՝ հոգրիա օրէնքը:

Ս. քահ. Բէգ-Նազարեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ

—

Չորս տարի սրանից առաջ հրատարակվեց Վահան քահանայ Շահումեանցի աշխատասիրած «Բացատրութիւն Մատթէոսի Աւետարանի, ի պէս դաւանաբանութեան կրօնի» գիրքը, որի ճակատին գրոշմած էր հետեւեալը. «Ընթերցեալ զայս բացատրութիւն ս. Աւետարանին Մատթէոսի, չը գտի ինչ ի սմին ընդդէմ ուղիղ վարդապետութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ»—«Անդամ տպարանական ժողովոյ՝ Արիստակէս եպիսկոպոս»: Այդ գիրքը տպված է 1888 թվին «Հրամանաւ տեառն տեառն Մակարայ վեհափառ և սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն հայոց»:—Ինչ է պատճառը, որ երբ ես ասում եմ «Քրիստոսի միակ անձի մէջ անբաժան և անշփոթապէս միացած են երկու բնութիւնք—Աստուածային և մարդկային», այդ նեստորական է համարվում. բայց նեստորական չէ համարվում մի և նոյնը Շահումեանի գրքում ասելով. «Ցիսուսի մէջ դաւանում ենք... բնութիւնը երկու, այն է. Աստուածային և մարդկային»: Ինչ է պատճառը, որ երբ ես ասում եմ «Մեր եկեղեցու ուղիղ դաւանութեան համեմատ կարելի է ասել և մի բնութիւն և երկու բնութիւն ունէր Քրիստոս» և թէ «երկու բնութիւն ասելով խոստովանում ենք նրա աստուածային և մարդկային բնութիւնը, իսկ մի բնութիւն ասելով՝ խոստովանում ենք երկու բնութեանց անբաժան և անշփոթ միաւորութիւնը», այդ նեստորական և եւտիքական է համարվում, իսկ նեստորական և եւտիքական չէ համարվում մի և նոյնը Շահումեանցի գրքի 14 երեսի վրա ասելով. «Սուրբ և ուղղափառ վարդապետներն ասացին նաև, որ Քրիստոսի մէջ կարելի է ուղղափառ մտքով ընդունել մի կամ երկու բնութիւն. և այս իսկ պատ-

ւորութեան տակ, ի հարկէ, զուտ ճշմարտութիւններ լինել չէին կարող։ Բարեխիղճ կենսագրողը, երբ գրիչ է վերցնում գծագրելու մի՝ արդէն մեռած մարդու կեանքը, պէտք է չափի իր ոյժը և փաստերի վրա հիմնվի։ Հակառակ դէպքում դուրս կը գայ այն ծիծաղելի պատկերը, որ իրանից ներկայացնում է յիշեալ լրագրի յօդուածը, դուրս բերելով Խորէն Նար-Բէյին իբրև վարժապետական և Խրիմեանի հաւասար անձ, եղական տաղանդ ու մեծութիւն։ Այսպէս միայն առասպելներ են գրում և ոչ թէ կենսագրութիւններ...»։

—

Նոյեմբերի 15-ին լրացաւ ռուսաց պուբլիցիստագրող Ն. Միխայլովսկու ծննդեան յիսնամեակը։ «Այդ օրը, գրում է «Русская Жизнь» լրագիրը, նա ստացաւ բազմաթիւ շնորհաւորութիւններ։ Այդ յօբելեանի համար ոչինչ նախապատրաստութիւն չէր եղել։ Միմիայն այն լուրը, թէ լրանում է Միխայլովսկու գրական գործունէութեան 30-ամեակը, առաջ բերեց համակրութեան նշաններ նրա բազմաթիւ համակրողների կողմից.—դրանք էին բարեկամ խմբագրութիւնները, բազմաթիւ մասնաւոր հասարակական խմբեր և երիտասարդական շրջաններ։ Միխայլովսկու շատ ընկերները, ինչպէս Պլեշչեև, Գլեբ Ուսպենսկի շնորհաւորեցին իրանց ընկերակցին ջերմ կերպով։ Ն. Միխայլովսկին այն օրը անցկացրեց ծանօթների նեղ շրջանում»։

—

ՎԵԼԻՍՑԻԽԷԻՑ մեզ գրում են. «Ամսի 14-ին, կէս գիշերին Ա. Բ. անունով մի տեղացի, որը բաւական հարուստ էր և վեց որդու հայր, թոկով խեղդեց իրան։ Խեղդվողի գրպանում գտան մէկ թղթի կտոր, որի մէջ գրված էր. «Խնդրեմ ոչ ոքին չը մեղադրէք, ես եմ իմ կեանքիս վերջ տուողը, պատճառը իմ հիւանդութիւնն էր, որին դիմանալը անկարելի էր։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐԷՆ ՆԱՐ-ԲԷՅԻ ԹԱՂՈՒՄԸ

—

Խորէն արքեպիսկոպոս Նար-Բէյի թաղման մասին, Կ. Պոլսից, ի միջի այլոց հետեւեալն են գրում արտասահմանի լրագիրներին. «Աշխարհական պատրիարքը, որ թշնամական յարաբերութեան մէջ էր Նար-Բէյի հետ, ճիշդ օր մը անոր մարմինը եկեղեցի փոխադրել չի տուաւ և հետեւեալ օրը, առանց ժողովրդին պաշտօնական ոչ է ծանուցում ուղղելու, առանց նախապէս մահագոյժի հրատարակութեան (ինչ որ ամենէն աննշան քահանային անգամ չէր ղայրիր), մի քանի եկեղեցականներով ափալ-թափալ կատարել տուաւ նրա յուղարկաւորութիւնը և թաղումը, որին ինք ներկայ չը գտնուեցաւ։ Այդ եկեղեցականը առանց մի օրինաւոր դամբանականի (մի կարճ դամբանական խօսած է Գրիգորիս արքեպիսկոպոս Ցովհաննէսեան, ատենապետ Կրօնական ժողովին), առանց իր կարգին վայելուչ եկեղեցական հանդիսաւոր չքեղ թափորի, պարզ, անշուք անյիշատակ մէկու մը պէս տարուեցաւ Շիշլի և անշուք թաղուեցաւ»։

ՆԱՄԱԿ ԱՄԷՐԻԿԱՑԻՑ

—

Չիկագօ, 3/15 Նոյեմբերի

Միացեալ-Նահանգաց նախագահական քառամեայ ընտրութիւնք նոյեմբերի 8-ին վերջացան։ Ընտրութիւնք այս անգամ բոլորովին անակնկալ արդիւնք յառաջ բերին։

Ռամկապետական կուսակցութիւնն յաղթող հանդիսացաւ հասարակապետական կուսակցութեան։ Ուրիշ երկու կուսակցութիւններ ալ կան հոս, որոնք դեռ մանուկ են, բայց շուտ կաճին և կը զարգանան։

Ռամկապետականք յաղթեցին և ըստ կարծեաց ոմանց հետեւեալ պատճառներուն ընծայելի են այս ներկայ յաղթութիւնք։

1) Հանրութեան մեծ մասն չէր սիրեր ներկայ վարչութեան մաքսային դրութիւնն։ Ժողովուրդը չը սիրեր՝ մի քանի հարուստ մենաւաճառներու շահուն համար մաքսային յոյժ բարձր տուրք վճարել։ Ժողովուրդը գոհ է եթէ այժմու ճարտարութիւնք չառաջանան, եթէ կրնան իրենք Եւրոպիոյ աժան արտաբերութիւններն գործածել։

2) Գաղթական եւրոպացիք չէին սիրեր ներկայ հասարակապետական վարչութեան պահանջն ի մասին հասարակաց դպրոցներու. նոյնպէս և քաթոլիկք որ կուզեն փոքրերու կրթութիւն տալ իրենց թեմական (յարանուանական) դպրոցաց մէջ։ Ռամկապետականք խոստացան գոհացումն տալ լութերական զերմանացւոց և քաթոլիկներու, չը ստիպելով իրենց զաւակներն անհրաժեշտ հասարակաց կամ կառավարական դպրոցներ ղրկել։

3) Կըսուի թէ անարխիստներն և սոցիալիստներն (անիշխանականք և ընկերավարականք) ալ խոստում ընդունած են ռամկավարականներէն գոհացումն ստանալ։

Ուստի Կլիվլէնտ՝ Հարիսնէն աւելի ժողովրդական քուէ շահեցաւ։ Գրեթէ անելդայ է որ վեր-ընտրողք (relector) ալ զԿլիվլէնտ վաւերացնեն։

Տեսնենք չորս տարի վերջ ով պիտի յաղթէ։

Կ. Մ. Մանուկեան

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Լէյպցիգ, 13/25 Նոյեմբերի

Չենք կարող ուրախութեամբ մատնացոյց չանել այն մխիթարական երեւոյթի վրա, որ արտասահմանեան հայ ուսանողութեան գոնէ մի մասի մէջ ակնյայտնի երեւում են ձգտումներ իրանց ոյժի, ժամանակի և կարողութեան չափ հեռուից օգտակար լինել այն հասարակութեանը, որի շահերին անկեղծօրէն ծառայելու կոչված են։ Նրանք մօտիկ ապագայում։ Խօսքս Լէյպցիգի հայ ուսանողութեան մասին է։

Գերմանական կրթութիւնը, գերմանական բարձրագոյն դպրոցները, անուրանալի է, որ ռուսահայերիս մտաւոր և բարոյական վերածնութեան գործում մի քանի առանձնակ տարիներից ի վեր կատարել են և կատարում են առաջնակարգ դեր. հեռու չը գնանք, բաւական է միայն յիշատակել այն երեւոյթը, որ հէնց այսօր մեր մամուլի և ժողովրդական կարծիքի ղեկավարների մեծագոյն տոկոսը կազմում են անձնաւորութիւններ, որոնք իրանց գրականական գործունէութեամբ և դիրքով մեծ մասամբ գերմանական համալսարաններին են պարտական, հէնց այդ տեսակէտից շատ ուրախալի է, որ այս վերջին 5—6 տարիների ընթացքում գերմանական բարձրագոյն դպրոցներ դիմող հայ ուսանողների նուազած թիւը, այժմ նորից սկսել է բազմանալ և որ ամենազլխաւորն է՝ կենտրօնանալ Լէյպցիգի նման հռչակաւոր համալսարանի մէջ։ Այդ նոր հոսանքին և կենտրօնացմանն ենք պարտական, որ այսօր հայ ուսանողները վերանորոգել են, 1884—86 թուին գոյութիւն ունեցող, բայց անդամների քչութեան պատճառով դադարած «Հայ ճեմարանական ընկերութիւնը»։

Լէյպցիգի հայ ճեմարանական ընկերութիւնը իրան երկու գլխաւոր նպատակներ է դրել՝ նախ հայ մամուլի միջոցով ծանօթացնել հասարակութիւնը եւրոպական կեանքի և գրականութեան նշանաւոր երեւոյթների հետ, իսկ միւս կողմից՝ գերմանական հասարակութիւնը հայկական կեանքի և գրականութեան աչքի ընկնող երեւոյթների հետ. ընկերութեան միւս նպատակն է միջոց տալ Գերմանիայում ուսանող հայ երիտասարդներին մեր գրականութեան, ժողովրդի և երկրի ուսումնասիրութեանը վերաբերեալ որպէս մայրենի, նոյնպէս և օտար լեզուներով եղած մատենագրական աղբիւրների և երկերի հետ ի մօտոյ ծանօթանալ։ Ընկերութիւնը իր դրած այս երկու գլխաւոր նպատակների իրագործման միջոցներ ճանաչում է. ընկերութեան ճեմարանական անդամների կողմից իրանց մատենագիտութեան վերաբերեալ դասախօսութիւններ, որոնք ընկերութեան ժողովների ժամանակ կարդացվելուց և քննադատվելուց յետոյ նորից մշակութեան են ենթարկվում և ապա ուղարկվում են դրանք հայ պարբերական մամուլին ի տպագրութիւն, և ապա սեմեստրում մի քանի անգամ գերմաներէն լեզուով կարդացվելու են դասախօսութիւններ, որոնց նիւթը պէտք է գլխաւորապէս վերցված լինի հայկական կեանքից և գրականութիւնից. այսօրինակ դասախօսութիւնների ժամանակ հրաւիրվում են Լէյպցիգի համալսարանական ընկերութիւնների անդամները և պրոֆէսօրները, որոնց միջոց է տրվում ըստ կարելոյն ծանօթանալ հայերի և հայկական կեանքի մէջ եղած աչքի ընկնող երեւոյթների հետ։ Գերմաներէն լեզուով գրված դասախօսութիւնները ուղարկվում են գերմանական մամուլի մէջ տպագրվելու։

Ինչպէս տեսնում էք, Լէյպցիգի հայ ճեմարանական ընկերութեան նպատակները շատ գովելի և օգտաւէտ են, սակայն դրանք միայն այն դէպքում կարող են աջողվել և պտղաւոր լինել, երբ ընկերութիւնը իր ձեռքի տակ կունենայ հայկական ողջ կեանքի ուսումնասիրութեան վերաբերեալ մի փոքր ի շատէ հարուստ մատենադարան, որը և կը լինի այն աղբիւրը, որից կարող կը լինեն ճեմարանական անդամները իրանց նպատակների իրագործման համար օգտվել։ Ուրեմն ընկերութեան ողջ աջողութիւնը կախված է այն հարցից, թէ ինչ չափով հարուստ նիւթ կը մատակարարի նրա անդամներին մատենադարանը։ Ահա հէնց այդ մատենադարանի հարցն է, որի առջև կանգ է առնում ընկերութեան նպատակների իրագործման գործը։ Ինքն ընկերութիւնը հարուստ չէ, որ կարողանայ իր հաշուով անհրաժեշտ գրքեր բերել տալ. ընկերութեան այժմեան գրադարանը, բացի մեծապատիւ պարոն Կարապետ Եղեանցի նուիրած տասնեակ գրքերից, շատ աղքատ է. մնում է միայն մի միջոց, դա հայ հասարակութեան համակրութիւնը և նիւթական աջակցութիւնն է։ Եւ եթէ այսօր հայ հասկացող և ունեւոր դասակարգը օգնութեան ձեռք մեկնի ընկերութեանը, գրադարանը հարստացնելու համար դրամական նուիրաբերութիւններ անելով, այն ժամանակ նա ոչ միայն մի շատ համակրելի գործ արած կը լինի, այլ նոյն իսկ մեծապէս նըպաստած կը լինի ողջ Գերմանիայում գտնվող հայ ուսանողներին իրանց մասնագիտութեան՝ հայկական ժողովրդի պէտքերին և շահերին համաձայն՝ ուսումնասիրութեան գործի մէջ։ Մենք ասեցինք ողջ Գերմանիայում գտնվող հայ ուսանողներին, որովհետև ընկերութեան մատենադարանից իրաւունք կունենան օգտվել նաև ուրիշ համալսարանական քաղաքներում ուսանող հայերը, որոնց հարկաւոր եղած ժամանակ կուղարկվի այս կամ այն անհրաժեշտ գիրքը։

Այսպէս ուրեմն կրկնում ենք, որ Լէյպցիգում մի հայ կենտրօնական մատենադարանի կազմակերպութեան խնդիրը միայն այն ժամանակ կարող է լուծված համարվել, եթէ հայ հասարակութիւնը նիւթապէս օգնի ընկերութեանը իր նպատակներին հասնելու, և մեծայոյս ենք,—որ մեր այս օգտաւէտ առաջարկութիւնը չի մնայ առանց հետեւանքի և հայ հասարակութիւնը կը շտապի իր կարողութեան չափ օգնելու ընկերութեանը։ Այդ նպատակի համար ընկերութիւնը ստացաւ մեր յայտնի բարեգործ մեծապատիւ պարոն Առաքել Ծատուրեանցից 200 ռուբլի նուէր, երբ պարոնը իր ներկայութեամբ պատուեց ընկերութեան նիստը. յուսով ենք, որ պարոն Ծատուրեանց կունենայ իրան հետեւողներ, և որքան շուտ, այնքան լաւ։ Նուիրատուութիւնները կարող են կամ մեր խմբագրութիւններին ուղարկվել կամ թէ ուղղակի ընկերութեանը։ Յուսով ենք, որ մեր հայ խմբագիրները, հեղինակները և հրատարակիչները իրանց կողմից ևս կօգնեն ընկերութեանը։

Ա. Աթանասեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօ դիմելու է ֆրանսիական ազգային ժողովին մի պատգամագրով, որի մէջ կը զգուշացնէ ազգի ներկայացուցիչներին հանրապետութեան թշնամիների մեքենայութիւնների դէմ։

—«Köln. Zeit.» լրագիրը հաղորդում է որ գերմանական դաշնակցական խորհուրդը հակառակ է եղուիտների վերաբերմամբ եղած օրէնքի վերացնելուն։

—Բոլգարական կառավարութիւնը դարձեալ քայլեր է արել համոզելու Բ. Դուռը՝ Կօլուբրգեան իշխանին բոլգարական իշխան ճանաչելու վերաբերմամբ։ Սակայն այդ փորձի հետեւանքն էլ անաջող է եղել։

—Ֆրանսիական բանկը մերժել է Պանամայի գործի առիթով կազմված պարլամենտական յանձնաժողովին՝ յանձնել հանգուցեալ բարոն Էյնտախի ընթացիկ հաշիւները։

—Շվէդիայի պարլամենտն ընդունել է կառավարութիւնից առաջարկած զինուորական նոր օրինագիծը։

—Ռումբարական նոր մինիստր-նախագահ Վէկերլէ, պարլամենտում մի ատենաբանութիւն արեց, որը շատ լաւ տպաւորութիւն ունեցաւ բոլոր կուսակցութիւնների վրա։ Ինքն Վէկերլէ պատկանում է ռումբարական ազատամիտ-ռամկապետական կուսակցութեան։ Լսելով որ իշխան մեղադրում են, իբր թէ նա պէտք է աշխատէ թշնամութիւն գցել ժողովրդի և արիստոկրատիայի մէջ, Վէկերլէ իր ճառի մէջ հերքեց այդ մեղադրանքը, ասելով որ ազգի բոլոր դասակարգերի միահամուռ գործակցութիւնը անհրաժեշտ է ազգի բարօրութեան համար։ Երեկոյեան ազատամիտ կուսակցութեան պատկանող մօտ 2000 մարդ, վառած ջահերը ձեռքերին համակրական ցոյցեր արեցին մինիստր-նախագահին։ Այդ ցոյցերին հանդիսատես էր Վէկերլէի տան շուրջը խմբված մօտ 14,000 հոգուց բաղկացած ամբոխը։ Վէկերլէ բալկոն դուրս գալով, պատասխանելով քաղաքագլխի ճառին, դիմեց ժողովրդին մի ատենաբանութեամբ, որի մէջ այն միտքը յայտնեց, որ Ռումբարիան իր քաղաքակրթութեամբ և առաջադիմութեամբ պարտական է ազատամիտ և դեմոկրատական գաղափարներին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկան՝ կատարեալ ոսկեհանք է արտիստների, դերասանների և երգիչների համար։ Բուտէր և Բարէա դերասանները մի սեզօնի ընթացքում վաստակեցին Ամերիկայում 362,000 դոլլար, անգլիացի երեւելի դերասան Իրվինգ Ամերիկայում իր արած եօթ ամսեայ ճանապարհորդութեան ընթացքում 450,000 դոլլար է աշխատել, Սարա Բէրնար մի սեզօնում 300,000 դոլլար է ստացել, անգլիուհի Լիլի Լանտրի իւրաքանչիւր շաբաթ 4000 դոլլար էր ստանում, Պատտիին իւրաքանչիւր երեկոյեան վճարում էին Ամերիկայում 5000 դոլլար, վերջապէս Ժան Բէչկէ իր իւրաքանչիւր կոնցերտից վերցնում էր մօտ 2000 դոլլար։

* * *

Մենք սովոր ենք որ իւրաքանչիւր առաւօտ մի մարդ կամ մի կին ամսեայ մեզ կաթ է բերում։ Բայց Նիւ-Եօրկում այդպէս չէ. այնտեղ կաթը կը հայթայթվի նոյն ձեւով, ինչ ձեւով ջուրն է հասցնվում քաղաքի բոլոր բնակիչներին՝ ջրանցքի միջոցով։ Նիւ-Եօրկից մի 50 վերստ հեռաւորութեան վրա գոյութիւն ունի մի մեծ գիւղատնտեսական հիմնարկութիւն, որը բոլոր չրջակայ արընտեսութիւններից կաթ առնելով հաւաքում է այդ կաթը մի մեծ բէղերվուարի մէջ և ապա ինքն իր կողմից յանձն է առնում քաղաքի տներն անցկացած խողովակներով հասցնել կաթը քաղաքի բնակիչներին։ Տարեկան որոշ դումար վճարելով կաթ հայթայթող հիմնարկութեանը, քաղաքի իւրաքանչիւր ընտանիքը առաւօտ բաց կանի իր բնակարանում յարմարեցրած ծորակը, որի խողովակից որոշ ժամերին կաթը կը վազէ այնպէս, ինչպէս մեր տներում ջուր է վազում ջրանցքի ծորակից։ Ի հարկէ կաթը կը մատակարարվի իւրաքանչիւր տանը որոշ քանակութեամբ, համեմատ տարեկան կամ ամսական վճարի չափին։

* * *

Լրագիրները հաղորդում են որ աշխարհահռչակ խաղացի երաժիշտ-հեղինակ Վերդի դրում է մի նոր օպերա՝ «Դօն-Կիխօտ» անունով։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՄՕՍԿՎԱ, 23 Նոյեմբերի։ Երէկ վախճանվեց բանաստեղծ Ա. Ֆէտ-Շէնշին, 72 տարեկան. մահը վրա հասաւ այն ժամանակ, երբ բանաստեղծը պատրաստում էր իր ոտանաւորների լիակատար նոր ժողովածուն հրատարակութեան համար և իր յիշողութիւնների նոր հատորը։

ԲԵՐԼԻՆ, 23 Նոյեմբերի։ Իշխան Բիսմարկ, Վարցինից Ֆրիդրիխսրուէ գնալիս՝ անցաւ Բերլինով. կայարաններում իշխանին ջերմ կերպով ողջունեց բազմաթիւ հասարակութիւնը։

ՊԱՐԻԶ, 23 Նոյեմբերի։ Կազիմիր Պերիէ հրաժարվեց կազմակերպել նոր մինիստրութիւն. ասում են, որ Բուրժուան էլ է հրաժարվում։ Լրագիրները հաղորդում են, որ ճգնաժամը լուրջ է։

ՍՕՖԻԱ, 23 Նոյեմբերի։ «Ազատութիւն» լրագրի տեղեկութիւններին նայելով, տեղի ունեցաւ կառավարչական կուսակցութեան խորհրդակցութիւն, որի ժամանակ մինիստրները առաջարկեցին սահմանադրութեան մէջ անել հետեւեալ փոփոխութիւնները. 1) մտցնել սահմանադրութեան մէջ իշխանի տիտղոսը, նրա իրաւունքը՝ շնորհելու չքանչաններ և այլն. 2) քչացնել պատգամաւորների թիւը, որ նրանք ընտրվեն ոչ թէ իւրաքանչիւր 10,000, այլ 20,000 բնակիչների կողմից. 3) պարզաբանել սահմանադրութեան այն յօդուածները, որոնք վերաբերում են լիակատար ձայնատուութեան. 4) հիմնել երկու նոր մինիստրութիւն. 5) փոփոխել 36-րդ յօդուածը, ըստ հնման վրա իշխանի որդիքը պէտք է դառնան ուղղափառ կրօնը։ Կառավարութիւնը այն կարծիքն

է յայտնում, որ այդ յօդուածը զրկում է Իշխանի որդկերանց իրաքանչիւր քաղաքացուն շնորհված խղճի ազատութիւնից։ Այն դէպքում, երբ այս ենթադրութիւնները կընդունվեն ազգային ժողովի երկու երրորդականի կողմից, այն ժամանակ կենթարկվեն հիմնադիր ժողովի քննութեան։

ԼՕՆԴՕՆ, 24 նոյեմբերի։ Մեծ Իշխան Սերգիյ Ալէքսանդրովիչ իր ամուսնու հետ այսօր ուղևորվեց Ռուսաստան։

ՊԱՐԻԶ, 24 նոյեմբերի։ Լուբէ և Դեվել յանձն չառան կազմակերպել մինիստրութիւն։

ՎԻՍԲԱԴԷՆ, 24 նոյեմբերի։ Երէկ վախճանվեց գեներալ-ադիւտանտ ծովապետ Գլազենապ։

ՊԱՐԻԶ, 24 նոյեմբերի։ Ռիբո կազմակերպում է մինիստրութիւն.—Նախկին կազմակերպութիւնն է՝ նախագահութեամբ Ռիբոյի. Բուրժուա—մինիստր արդարադատութեան, փոխանակ Ռիվարի։

ԱՍՏՐԱԽԱՆ, 24 նոյեմբերի։ Այսօր սկսվեցան զինուորական նահանգական դատարանի նիստերը՝ յոնիս ամսին Աստրախանում տեղի ունեցած անկարգութիւնների գործի մասին։ Դատի են ենթարկված 170 մարդիկ։

Խմբագիր-Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԿՕՆՏՐՕԼՆԻ ՊԱԼԱՏԸ յայտարարում է սրանով, որ նրա ատենում, որը գտնվում է Նարիրեժնայա փողոցում, տուն Յովհաննէս Չիլթախեանի, № 26, ծախվելու է քաղաքային ԱՈՒԿՑԻՕՆՈՎ, ներկայ 1892 թուի դեկտեմբերի 6-ին, ժամը 10-ին առաւօտեան՝ մինչև 1000 պուդ զրած թուղթ։ Թոյլատրվում է ծախել թուղթը նաև փոքր քանակութեամբ։ 1—3

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Հինգշաբթի, նոյեմբերի 26-ին, Հայ դերասանական մշտական խումբը կը ներկայացնէ մասնակցութեամբ պ. Գէորգ Չմշկեանի

ԿԱՐԴԻՆԱԼ ՐԻՇԵԼԻԷ

Պատմական դրամա 5 գործ. թարգմ. Ս. Կարինեանցի։

Ներկայացման մասնակցում է ամբողջ խումբը։

Սկիզբն է ժամի 7½ երեկոյեան։ Տեղերի գները սովորական են։ 2—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.

Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։

(№ 145) 94—150

ԷՎԷԼԻՆԱ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (հոգեբանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրոնական և Խիղէկելի դրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսովի դրավաճառանոցում.

(№ 126) 15—20

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական դասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համար ու ՄԱՏՉԵԼԻ ՉԵՌՆԱՐԿ առևտրական հաշուարարութիւնը առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար։

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՉԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տոկոսների լիակատար աղիւսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 1%-ից մինչև 12%.

Վաճառվում է եղբարց Յովհաննէսների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисъ, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք դիմում են վերջին հասցէով՝ С. П. Мануэльянцу.

Գինն է 1 ռուբլի։ Փոստի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի։ 122—154

(9—№ 95)

ՇՈՒՇԻ

Ընդունում եմ պատուէրներ տպագրելու ամենատեսակ բլանկներ, հաշուեթղթեր, ծրարներ, աֆիշաներ, գրքեր, բրոշիւրներ և այլ ամէն տեսակ պատուէրներ։ Տպագրութիւնը մաքուր է կատարվում, սրբագրութիւնը խնամքով է լինում և թուղթը լաւ։ Դպրոցների, ատենական տեղերի և գրասենեակների ուշադրութիւնն եմ հրաւիրում, որովհետև գները շատ ձեռնտու են։ Դիմել ՇՈՒՇԻ, ԱՆԴՐԷԱՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑԻՆ.

№ 131 2—5 (շ. հ.)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Սարկաւագ Յ. Նազարեանցի կազմած

1893 թ. ՕՐԱՑՈՅՑԸ

ԸՆԴԱՐՁԱԿ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

Գինն է 20 կոպէկ։ 10-ով առնողին՝ 17 կոպէկ, 100-ով առնողին՝ 15 կոպէկ 100-վ առնողին՝ մի օրինակ „Անեկդոտներ“ III հատոր։

50 և 100 հատ առնողը ճանապարհածախս չէ վճարում։

Դիմել՝ Тифлисъ, Константиновская улица, д. № 3.—Діакону Оганесу Назарянцъ. № 131 2—2

ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ

(ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ)

Կազմեց Գիւտ քահանայ ԱՂԱՆԵԱՆՑ. Տպված է Թիֆլիսում Շարաձէի տպարանում։ Գինը 60 կոպէկ է, իսկ ճանապարհածախսով՝ 75 կոպէկ։

Թիֆլիսի դրավաճառների մօտ։ 1—2

ՊԱՆՍԻՕՆ ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՎ

Ընդունում և պատրաստում է աշակերտներ գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, Լազարեան ճեմարանի մինչև հինգերորդ դասատուն. նոյնպէս զէմզէմների, տեխնիկական և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Պանսիօնում ուսանվում են՝ կրօն, հայոց եկեղեցական պատմութիւն, մեկնութիւն պատարագի հայոց, հայոց լեզու (հայերի համար), ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն, յունարէն, վրացերէն, թուրքերէն լեզուներ, թուաբանութիւն, ալգեբրա, երկրաչափութիւն, ընդհանուր պատմութիւն, ռուսաց պատմութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն, Ռուսաստանի աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, նկարչութիւն, գրութիւն, խմբական երգեցողութիւն, երաժշտութիւն, պար, մարմնամարզութիւն։

Աշակերտներ ընդունվում են թօշակաւորներ, կիսաթօշակաւորներ և երթեւեկներ։

Պանսիօնում դասախօսում են գիմնազիական և ռէալական ուսումնարանի ուսուցիչներ։

Հասցէն. Тифлисъ, Сололаки, Вельяминовская улица, домъ № 11.

(№ 148) 10—10 (շ)

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ դեղերի, մորթին դեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և անտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ նաւատորդեանի առաջին մասն. Հիւանդանոցի տակ։

(№ 67) 38—100 (Ի. շ.)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հրատարակվում է տարին երկու անգամ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 2 ռուբլի։

Բաժանորդագրութիւնը շարունակվում է։ Յանկացողները դիմում են հետևեալ հասցէով՝

ТИФЛИСЪ, Николаевская 23.

3—3 № 133 Հրատարակիչ՝ Յովհաննէս ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

Открыта подписка на 1893 годъ

На ежедневную газету

„ДОНСКАЯ ПЧЕЛА“

(Годъ XVIII)

Цѣль газеты—служеніе интересамъ Приазовья, Донской Области и Сѣвернаго Кавказа; разработка вопросовъ, касающихся экономической жизни этихъ районовъ, своевременное обсужденіе всѣхъ явленій, имѣющихъ близкое соприкосновеніе съ мѣстной жизнью, оглашеніе болѣе или менѣе важныхъ событій, текущія явленія и мѣстныя новости. Жизнь окружающихъ городовъ и другихъ сосѣднихъ мѣстностей въ „Донской Пчелѣ“ имѣетъ всегда обширное мѣсто. Торговый отдѣлъ „Донской Пчелы“ доведенъ до самыхъ широкихъ размѣровъ; коммерческія свѣдѣнія, цѣны Ростовскаго, Таганрогскаго, Новороссійскаго и другихъ рынковъ. Этотъ отдѣлъ особенно важенъ для всего торговаго міра Кубанской, Донской, Терской областей, Екатеринославской, Воронежской и Ставропольской губерній, гдѣ „Донская Пчела“ уже успѣла получить достаточную извѣстность, какъ необходимое подспорье для торговыхъ сдѣлокъ.

Подписная цѣна

Съ доставкой и пересылкой: на годъ. 9 р. полгода 5 р. на 3 мѣсяца 2 р. 50 к. 1 мѣсяцъ 1 р. За перемѣну адреса взимается 30 коп. Письма и деньги адресуются исключительно въ контору редакціи «Донской Пчелы», въ Ростовѣ на-Дону. Контора покорнѣйше проситъ гг. иногороднихъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Премія. Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 20 Декабря сего 1890 года подписныя деньги за 1893 годъ, будетъ разосланъ безплатно Донско-Азовскій русско-армянскій Календарь на 1893 г.

2—3 Редакторъ-Издатель И. А. Теръ-Абраміанъ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Ասանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է հոկտեմբերի 1-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդոնովի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԵՍ եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

24—25

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Ноября 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.